

## Հարցաշար

*Խնդրում ենք պատասխանել հետևյալ հարցերին ոչ ավել, քան 250 բառի սահմաններում:  
Որոշ հարցեր կարող են բաց թողնվել:*

1. **Տեսլական.** Ո՞րը կլինի Ձեր՝ որպես Վրաստանի նախագահի ամենամեծ նպատակը:
2. **Կրթություն.** Ո՞րն է կրթական քաղաքականության Ձեր տեսլականը: Ինչպիսի՞ քաղաքականություն էք առաջարկում տարրական, միջնակարգ, մասնագիտական եւ բարձրագույն կրթության որակը բարելավելու համար:
3. **Հարկեր.** Ձեր կարծիքով ինչպիսի՞ հարկային համակարգ պետք է ունենա Վրաստանը եւ ո՞ր սկզբունքների հիման վրա պետք է սահմանվի եկամտահարկը:
4. **Տնտեսություն.** Ո՞րն է տնտեսական աճը խթանելու Ձեր տեսլականը: Հատկապես ո՞ր ոլորտներն են Ձեզ համար առաջնային եւ ինչպիսի՞ քաղաքականություն Դուք կառաջարկեիք Վրաստանի խորհրդարանին եւ կառավարությանը:
5. **Աշխատանք.** Ինչպիսի՞ քաղաքականություն պետք է իրականացնի կառավարությունը գործազրկության հաղթահարման ուղղությամբ:
6. **Առողջապահություն.** Ինչպիսի քաղաքականություն կվարեիք՝ ավելացնելու առողջապահության հասանելիությունն ու որակը:
7. **Սոցիալական անվտանգություն.** Ինչպիսի՞ քաղաքականություն էք նախատեսում սոցիալական անվտանգության բերավալման ուղղությամբ:
8. **Տեղական ինքնակառավարում.** Ձեր կարծիքով ինչպե՞ս պետք է Վրաստանում կազմակերպվի տեղական ինքնակառավարումը:
9. **Տարածքային ամբողջականություն.** Ինչպիսի՞ քաղաքականություն կվարեիք երկրի տարածքային ամբողջականությունը վերականգնելու եւ ժողովուրդների միջեւ վստահություն կառուցելու ուղղությամբ:
10. **Սեռական փոքրամասնությունների իրավունքներ.** Ո՞րն է Ձեր մոտեցումը սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության եւ հասարակական-քաղաքական կյանքում նրանց ավելի լավ ինտեգրման խնդրի վերաբերյալ:

11. **Կանանց մասնակցությունը քաղաքական կյանքին.** Խնդրում ենք նկարագրել քաղաքական կյանքին կանանց մասնակցությունն ավելացնելու վերաբերյալ Ձեր մոտեցումները (առկայության դեպքում):
12. **Ազգային փոքրամասնությունների իրավունքներ.** Ինչպիսի՞ քաղաքականություն կիրականացնեիք՝ ապահովելու ազգային փոքրամասնությունների լիարժեք մասնակցությունը եւ ինտեգրումը Վրաստանի սոցիալ-քաղաքական կյանքին:
13. **Շրջակա միջավայրի պաշտպանություն/բնապահպանություն.** Խնդրում ենք ներկայացնել Ձեր առաջարկները (առկայության դեպքում) առողջ եւ անվտանգ շրջակա միջավայր ստեղծելու վերաբերյալ:
14. **Ռազմավարական գործընկերություն.** Ո՞ր երկրի եւ կամ երկրների դաշինքի հետ Դուք կփորձեք հաստատել ռազմավարական, այդ թվում՝ ռազմական-ռազմավարական գործընկերություն: Ինչպիսի՞ քայլեր կձեռնարկեք այդ ուղղությամբ:
15. **Տարածաշրջանային քաղաքականություն.** Ինչպիսի՞ն կլինի Ձեր քաղաքականությունը Հարավային Կովկասի եւ Սեւծովյան տարածաշրջանների հանդեպ:
16. **Պաշտպանության քաղաքականություն.** Ինչպե՞ս կկազմակերպեիք երկրի պաշտպանության համակարգը:
17. **Անվտանգության քաղաքականություն.** Որո՞նք Ձեր կարծիքով պետք է լինեն Վրաստանի ազգային անվտանգության հիմնարար սկզբունքները:
18. **Աբորտ** (հղիության արհեստական ընդհատում). Անհրաժե՞շտ է արդյոք Ձեր կարծիքով աբորտի արգելումը: Ինչու՞ :
19. **Կոմերցիոն վարկեր.** Արդյո՞ք կոմերցիոն բանկերը պետք է իրավունք ունենան բռնագրավել անշարժ գույքի (բնակարան) սեփականությունը, եթե անձը անկարող է վճարել հարկերը: Ինչու՞ :
20. **Գյուղատնտեսական հողատարածք.** Ինչպիսի՞ն է Ձեր մոտեցումը Վրաստանում գյուղատնտեսական հողատարածք ձեռք բերելու օտարազգի քաղաքացիների իրավունքի վերաբերյալ: